

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ 2  
2013 թ. հունվարի 17–փետրվարի 5

2013 թ. փետրվարի 7

I. ԱՍՓՈՓԱԳԻՐ

- Պաշտոնական նախընտրական քարոզարշավը մեկնարկեց հունվարի 21-ին և դեռևս գուսպ և քիչ տեսանելի է: Գործող նախագահ Սերժ Սարգսյանի քարոզարշավը ամենանկատելին է, թեպետ որոշ թեկնածուներ նույնպես ակտիվորեն մասնակցում են քարոզարշավին: Հունվարի 31-ին Երևանի կենտրոնում նախագահի թեկնածու Պարույր Հայրիկյանը հրազենային վնասվածք է ստացել անհայտ անձի կողմից: Իշխանությունները հետաքննչական գործողություններ են իրականացնում: Թեպետ օրենքը թույլատրում է, որ քարոզարշավի անցկացման ընթացքում «անհաղթահարելի խոչընդոտներ» առաջանալու դեպքում թեկնածուն իրավասու է դիմել Սահմանադրական դատարան՝ երկու շաբաթով հետաձգել ընտրությունները, փետրվարի 5-ին պարոն Հայրիկյանը հայտարարել է, որ ինքը նման դիմում չի ներկայացնելու:
- Թեև իշխանությունները հայտարարել են ընտրությունները միջազգային պարտավորությունների համաձայն անցկացնելու իրենց մտադրության մասին, քարոզարշավի և պետական գործառույթների տարբերակումը հստակորեն չի արտահայտվում, նույնիսկ եթե պաշտոնյաները գտնվում են պաշտոնական արձակուրդում՝ քարոզարշավին մասնակցելու նպատակով: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները զեկուցել են այն դեպքերի մասին, երբ գործող նախագահի նախընտրական շտաբները գտնվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գրադեցրած շենքերում:
- Թեկնածուները պետք է բացեն հատուկ բանկային հաշիվ քարոզչությանը առնչվող բոլոր գործարքները իրականացնելու համար և պարբերաբար հայտարարագրեն իրենց քարոզարշավի ծախսերը: Այնուամենայնիվ, ոչ բոլոր թեկնածուներն են բացել հաշիվ կամ ներկայացրել քարոզարշավի իրենց առաջին հայտարարագրերը: Նման բացթողումների դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) ոչ մի պատժամիջոց չի կիրառել: ԿԸՀ-ն նաև ընդունել է որոշում, ըստ որի նախընտրական շտաբի տարածքի վարձավճարը չի համարվում որպես քարոզարշավի համար նախատեսված ծախս և հայտարարագրման ենթակա չէ:
- Ընտրությունների վարչարարական նախապատրաստումը ընթանում է ըստ օրենքով սահմանված վերջնաժամկետների: ԿԸՀ-ն շարունակում է աշխատել բաց և թափանցիկ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովները (ՏՀ) կազմավորվել են մինչև հունվարի 24-ը, սակայն թեև կուսակցությունները ունեցել են հնարավորություն առաջադրել անդամներ յուրաքանչյուր ՏՀ-ում, ոչ բոլորն են օգտվել այդ հնարավորությունից: ՏՀ-ի անդամները մասնակցում են մասնագիտական դասընթացներ, և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ երկարաժամկետ դիտորդները դրական են գնահատել այն դասընթացները, որոնց ներկա են գտնվել:

- Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը (ԱՎՎ) հայտարարել է, որ հունվարի 29-ի դրությամբ գրանցված ընտրողների թիվը՝ մոտ 2,5 մլն. է: Ոստիկանությունը ձեռնարկել է հատուկ միջոցներ, որոնց նպատակն է ճշգրտել ընտրացուցակները և իրազեկել ընտրողներին ընտրացուցակների տվյալները ստուգելու մասին:
- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ի լրատվամիջոցների մոնիթորինգի նախնական արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքական և ընտրություններին վերաբերյալ տեղեկատվությունը լրատվամիջոցների կիզակետում է: Լրատվամիջոցները պարբերաբար լուսաբանում են թեկնածուներին, բայց հեռուստատեսիվների մեծ մասում գերակշռում է գործող նախագահի և թեկնածու Բաթթի Հովհաննիսյանի քարոզարշավի լուսաբանումը: Բոլոր թեկնածուները օգտագործում են հանրային լրատվամիջոցներով իրենց տրամադրված անվճար եթերաժամը:
- ԿԸՀ-ն և դատարանները ստացել են քիչ թվով բողոքներ, որոնք մերժվել են կամ չեն ընդունվել վարույթ: Գլխավոր դատախազությունը խրախուսել է հանրությանը հայտնել ընտրակաշառքի դեպքերի մասին՝ առանց քրեական հետապնդման մտավախության:

## II. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎ և ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Պաշտոնական քարոզարշավը, որը մեկնարկել է հունվարի 21-ին և ավարտվելու է փետրվարի 16-ի կեսգիշերին, դեռևս զուսպ և քիչ նկատելի է: Գործող նախագահ Սերժ Սարգսյանի քարոզարշավը ամենանկատելի է: Խորհրդարանում ներկայացված մի քանի կուսակցությունների որոշումը չառաջադրել թեկնածուներ, մասամբ ազդել է քարոզարշավի ընդհանուր մթնոլորտի վրա:<sup>1</sup>

Ութ թեկնածուներից չորսը անցկացնում են քարոզչություն փակ և բաց տարածքներում: Սերժ Սարգսյանի և Բաթթի Հովհաննիսյանի նախընտրական թիմերը անցկացնում են դռնեղուր քարոզչություն: Պաստառներ և այլ տպագիր քարոզչական նյութեր բավականին սակավ են: Թեպետ առ այսօր թեկնածուներից չորսը այցելել են մարզեր, մայրաքաղաքից

<sup>1</sup> Բարգավաճ Հայաստան կուսակցությունը (ԲԳԿ), Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) և Հայ յեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), որոնք 2012 թ. խորհրդարանական ընտրություններին միասին ստացել են 131 խորհրդարանական մանդատից 49-ը, չեն առաջադրել նախագահական թեկնածուներ և հայտարարել են, որ չեն սատարում գրանցված թեկնածուներից որևէ մեկին: Ռուբեն Այվազյանը, ԲՀԿ անդամ, ներկայացրել էր իր թեկնածությունը ԿԸՀ, սակայն հետագայում չի գրանցվել քանի որ որոշել է չվճարել ընտրական գրավը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն դեռ չի կարողացել հանդիպել այդ կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

դուրս ծավալուն հանրավաքներ եղել են միայն գործող նախագահի քարոզարշավի շրջանակում:<sup>2</sup>

Նախընտրական քարոզարշավում նկատվում է աշխույժ բանավեճի պակաս: Քաղաքացիական և քաղաքական իրավունքները, պետության դերը հասարակական կյանքում և տնտեսությունը թեկնածուների մեծ մասի մոտ ուշադրության կենտրոնում են: Գործող նախագահը հիմնական շեշտը դնում է կայունության ու անվտանգության, բանակի, իբրև գլխավոր հրամանատար իր դերի և իր ռազմական անցյալի վրա՝ հստակորեն առանձնանալով տպագիր և հեռարձակվող քարոզարշակյալ այլ նյութերում: Գործող նախագահից բացի, բոլոր թեկնածուների կարծիքով առկա են ընտրացուցակների անճշտություններ և վարչական ռեսուրսի չարաշահում և մտահոգություն են արտահայտում ընտրական գործընթացի ընդհանուր ամբողջականության վերաբերյալ:<sup>3</sup> Իրենց հերթին իշխանությունները բազմիցս կրկնել են ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու իրենց պարտավորության մասին:

Հունվարի 31-ի ուշ երեկոյան Երևանի կենտրոնում թեկնածու Պարույր Հայրիկյանը հրազենային վնասվածք է ստացել անհայտ անձի կողմից: Հաջորդ օրը նա ենթարկվել է վիրահատական միջամտության և իշխանությունները հետաքննում են գործը: Թեպետ Սահմանադրությունը թույլատրում է, որ քարոզարշավի անցկացման ընթացքում «անհաղթահարելի խոչընդոտներ» առաջանալու դեպքում թեկնածուն իրավասու է դիմել Սահմանադրական դատարան՝ ընտրությունները երկու շաբաթով հետաձգելու խնդրանքով, փետրվարի 5-ին պարոն Հայրիկյանը հայտարարել է, որ ինքը նման դիմում չի ներկայացնելու:<sup>4</sup>

Ընտրական օրենսգիրքը արգելում է պետական և համայնքային ծառայողներին նախընտրական քարոզչություն կատարել՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:<sup>5</sup> Շատ անգամ ընտրված կամ նշանակված պաշտոնյաները արձակուրդ են վերցրել

<sup>2</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ երկարաժամկետ դիտորդները հետևել են Հրանտ Բագրատյանի, Պարույր Հայրիկյանի, Բաֆֆի Հովհաննիսյանի և Մերժ Սարգսյանի քարոզչական միջոցառումներին: Հացադուլ հայտարարած Անդրիաս Ղուկասյանը չի վարում ակտիվ քարոզչություն: Մյուս երեք թեկնածուները (Արամ Հարությունյանը, Արման Մելիքյանը և Վարդան Սեդրակյանը) հիմնականում օգտվում են հանրային լրատվամիջոցների կողմից տրամադրված անվճար եթերաժամկց:

<sup>3</sup> Օրինակ, 2013 թ. հունվարի 28-ին պրնք. Բագրատյանը, Հայրիկյանը և Հովհաննիսյանը հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որտեղ նրանք կոչ են անում ստեղծել արդար և հավասար պայմաններ բոլոր թեկնածուների համար և հորդորում են քաղաքացիներին վճռականորեն մասնակցել ընտրություններին:

<sup>4</sup> Սահմանադրության 52-րդ հոդվածի և Ընտրական օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն, Հանրապետության Նախագահի թեկնածուներից մեկի համար անհաղթահարելի խոչընդոտներ առաջանալու դեպքում Հանրապետության Նախագահի ընտրությունը հետաձգվում է երկշաբաթյա ժամկետով: Անհաղթահարելի ճանաչված խոչընդոտները չվերանալու դեպքում նշանակվում է նոր ընտրություն, իսկ քվեարկությունն անցկացվում է նշված երկշաբաթյա ժամկետը լրանալուց հետո՝ 40-րդ օրը:

<sup>5</sup> 18.6-րդ հոդվածի համաձայն, «Արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել. 1) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին, ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս»:

քարոզարշավին մասնակցելու համար<sup>6</sup>: Չնայած իշխանությունները հայտարարել են միջազգային պարտավորություններին համահունչ ընտրություններ անցկացնելու իրենց մտադրության մասին, քարոզչական գործունեության և պետական գործառույթների տարբերակումը հստակ չէ, հատկապես մարզերում:<sup>7</sup>

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները տեղեկացվել են երեք դեպքերի մասին, երբ ուսուցչական կազմին կամ ուսանողներին իրենց վերադասները պարտադրել են մասնակցել գործող նախագահի քարոզչական հանդիպումներին:<sup>8</sup> Վանաձորում մի հաստատության բուժանձնակազմին պարտադրել են մասնակցել գործող նախագահի հանրահավաքին:

Համաձայն Ընտրական օրենսգրքի, ընտրական շտաբները չեն կարող տեղակայվել ընտրական հանձնաժողովների հետ նույն շենքերում, կամ պետական մարմինների զբաղեցրած շենքերում (բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարածքները չեն պատկանում պետական մարմիններին):<sup>9</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները հայտնել են այն դեպքերի մասին, երբ գործող նախագահի նախընտրական շտաբները գտնվում են նման շենքերում:<sup>10</sup> Գործող նախագահի պաշտոնական նախընտրական կայքում նշվում է, որ ողջ երկրի տարածքում տեղակայված են 117 նախընտրական շտաբներ: Սակայն, մարզային նախընտրական թիմը երկարաժամկետ

<sup>6</sup> ՀՀ Տարածքային կառավարման նախարարության համաձայն, տաս մարզպետներից ինը արձակուրդ են վերցրել գործող նախագահի համար նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները հաղորդել են, որ Արմավիրի, Արագածոտնի, Արարատի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերի մի շարք վայրերում, ինչպես նաև Երևան քաղաքի մի քանի համայնքներում որոշ քաղաքապետեր ձևակերպել են արձակուրդ քարոզչություն իրականացնելու համար:

<sup>7</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները հանդիպում են ունեցել Արագածոտնի պաշտոնակատար մարզպետի հետ, ով նախընտրել է հանդիպել ՀՀԿ-ի Աշտարակի գրասենյակում աշխատանքային ժամերին: Նա չի վերցրել արձակուրդ ընտրությունների կապակցությամբ: Արարատ մարզի գյուղերից մեկի համայնքապետը, ով ներկայումս գտնվում է արձակուրդում, գլխավորում է գործող նախագահի տեղական նախընտրական շտաբը և հայտնել է երկարաժամկետ դիտորդներին, որ նա տեղափոխել է շտաբը համայնքային վարչության շենք՝ նախընտրական շտաբի տարածքում էլեկտրական հոսանքի բացակայության պատճառով:

<sup>8</sup> Հունվարի 25-ին Երևանում և հունվարի 30-ին Վանաձորում (Լոռու մարզ) ուսուցիչներին հրահանգվել է մասնակցել գործող նախագահի քարոզչական միջոցառումներին և պարտադրվել է տրամադրել անձնագրային տվյալները դպրոցի տնօրենին: Հունվարի 23-ին Գապանի քաղաքապետարանը (Սյունիքի մարզ) զանգել է դպրոցներ տեղեկացնելու գործող նախագահի կայանալիք հանրահավաքի մասին:

<sup>9</sup> 18.5-րդ հոդվածի համաձայն, «Ընտրական շտաբները չեն կարող տեղակայվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում (բացառությամբ այն դեպքերի, երբ շտաբները զբաղեցնում են այդ մարմիններին չպատկանող տարածք), ինչպես նաև այն շենքերում, որտեղ գործում են ընտրական հանձնաժողովները:»

<sup>10</sup> Արմավիրի մարզում (Արևադաշտ) նախընտրական շտաբը գտնվել է նույն տարածքում ինչ ՏՀՀ-ն: Նախընտրական շտաբները գտնվել են Արմավիրի (Արմավիր, Էջմիածին և Մեծամոր) և Արագածոտնի (Ծաղկահովիտ) մարզերում քաղաքապետարանի շենքերում, Արագածոտնի (Արագած և Կարբի) մարզում Մշակույթի տանը, դպրոցի բակում գտնվող շինությունում Արագածոտնի (Օհանավան) մարզում (զեկույցը նախապատրաստելու ժամանակահատվածում շտաբը տեղափոխվել է):

դիտորդներին տեղեկացրել է, որ գործող նախագահի նախընտրական շտաբների թիվը զգալիորեն ավել է:<sup>11</sup>

ԿՀՀ-ի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը (ՎՎԾ) լիազորված է իրականացնելու վերահսկողություն՝ ապահովելու ընտրական հանձնաժողովների, քաղաքական կուսակցությունների և թեկնածուների դրամական միջոցների հավաստիությունը և թափանցիկությունը: Յուրաքանչյուր թեկնածուի քարոզարշավի համար կատարվող ծախսերի չափսը չպետք է գերազանցի 100 մլն. ՀՀ դրամ (մոտ 200,000 եվրո)<sup>12</sup>: Ըստ Ընտրական օրենսգրքի, թեկնածուները պետք է բացեն հատուկ բանկային հաշիվ ՀՀ Կենտրոնական բանկում քարոզարշավի հետ առնչվող բոլոր գործարքները կատարելու համար: Թեկնածուներից մեկը դեռևս չի կատարել այդ պահանջը:<sup>13</sup> Այնուամենայնիվ, ԿՀՀ-ն համարում է, որ հատուկ նախընտրական հաշիվ բացելը պարտադիր չէ և չկա այն բացելու օրենքով սահմանված վերջնաժամկետ:

Թեկնածուները պարտավոր են ներկայացնել ՎՎԾ իրենց եկամուտների և ունեցվածքի հայտարարագրերը գրանցումից հետո, երկու ֆինանսական հաշվետվություններ՝ մինչև քվեարկության օրը և մեկն էլ՝ մինչև ընտրությունների նախնական արդյունքների ամփոփումը: Յոթ թեկնածու ներկայացրել են առաջին ֆինանսական հայտարարագիրը հունվարի 30-ին՝ օրենքով սահմանված կարգով:<sup>14</sup> ՀՀ Կենտրոնական բանկը պարտավորված է երեք աշխատանքային օրը մեկ ՎՎԾ-ին հաշվետվություններ ներկայացնել թեկնածուների նախընտրական հիմնադրամների մասին: ՎՎԾ-ն ուսումնասիրում է թեկնածուների հաշվետվությունները, ստուգման արդյունքներով կազմում է տեղեկանք և ներկայացնում ԿՀՀ, որը տեղադրում է դրանք իր համացանցային կայքում: Ըստ ԿՀՀ-ի որոշման, նախընտրական շտաբների համար ծախսված վարձավճարները չեն համարվում քարոզչական ծախս և չեն ընդգրկվում թեկնածուների ֆինանսական հայտարարագրերում:<sup>15</sup>

### III . ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ընտրությունների վարչարարական նախապատրաստումը ընթանում է օրենքով սահմանված վերջնաժամկետներին համապատասխան: ԿՀՀ-ն շարունակում է աշխատել բաց և թափանցիկ՝ տրամադրելով իր նիստերի վերաբերյալ տեղեկատվություն և մուտք

<sup>11</sup> Ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդների, ինը մարզերում պարոն Սարգսյանի նախընտրական շտաբների թիվը՝ 728 է: Լրատվամիջոցների նյութերի համաձայն, ողջ երկրի տարածքում առկա են գործող նախագահի մոտ 1,500 նախընտրական շտաբներ:

<sup>12</sup> Թեկնածուների նախընտրական հիմնադրամը կարող է համալրվել իրենց անձնական միջոցներից (մինչև 5 մլն. ՀՀ դրամ, մոտ 10,000 եվրո) և ընտրության իրավունք ունեցող անձանց կամավոր մուծումներից (մինչև 100,000 ՀՀ դրամ, 200 եվրո): Այդ թեկնածուները, ովքեր առաջադրվել են քաղաքական կուսակցության կողմից կարող են նաև ստանալ մինչև 25 մլն. ՀՀ դրամ (50,000 եվրո), իրեն առաջադրած կուսակցության կողմից:

<sup>13</sup> Պարոն Մելիքյանը դեռ չի բացել նախընտրական հիմնադրամ, մինչդեռ պարոն Հարությունյանը բացել է հաշիվը հունվարի 23-ին:

<sup>14</sup> Պարոն Մելիքյանը չի ներկայացրել ֆինանսական հայտարարագիր:

<sup>15</sup> 2012 թ.-ի փետրվարի 16-ի ԿՀՀ-ի 33-րդ որոշման համաձայն, որը պարզաբանում է Ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածը :

ապահովելով թեկնածուներին, թեկնածուների վստահված անձանց, դիտորդներին և լրատվամիջոցների ներկայացուցիչներին: ԿԸՀ-ն առ այսօր չի սահմանել այն կանոնները, ըստ որոնց այն թեկնածուները, ովքեր որոշել են ինքնաբացարկ հայտարարել պարտավոր են փոխհատուցել իրենց նախընտրական քարոզարշավի ընթացքում պետության կողմից կատարված անվճար հեռարձակման եթերաժամի ծախսերը:<sup>16</sup> Ինչպես նաև, այն հարցը, թե արդյոք թեկնածուները կարող են մատուցել անվճար տրանսպորտային ծառայություններ ընտրողներին ընտրությունների օրը, մնում է անպատասխան:

ԿԸՀ-ն և ոստիկանությունը հրապարակել են հեռուստատեսությամբ ընտրողների իրազեկմանն ուղղված հոլովակներ, ինչպես նաև պատրաստել են տեղեկատվական տարբեր նյութեր, որոնց կիզակետում են ընտրացուցակների ճշգրտումն ու քվեարկության ընթացակարգերը, այդ թվում նաև սահմանափակ կարողություններով անձանց համար:

Թվով 1,988 ՏԸՀ-ները կազմավորվել են մինչև հունվարի 24-ը նախատեսված Ընտրական օրենսգրքով: ԸԸՀ-ները նշանակել են երկուական անդամ իրենց իրավասության տակ գտնվող յուրաքանչյուր ՏԸՀ-ում: Ազգային ժողովում ներկայացված հինգ քաղաքական կուսակցություններից յուրաքանչյուրը և ընտրական դաշինքը իրավունք ունեն յուրաքանչյուր ՏԸՀ-ում մեկական անդամ նշանակելու: ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն և ՕԵԿ-ը առաջադրել են անդամներ բոլոր ՏԸՀ-ներում, մինչդեռ ՀԱԿ-ը, Ժառանգությունը և ՀՅԴ-ն չեն համալրել իրենց տրված տեղերը 457, 65 և 51 ՏԸՀ-ներում համապատասխանաբար: Այս թափուր տեղերը համալրվել են համապատասխան ԸԸՀ-ների նախագահների կողմից՝ իրավական դրույթների համաձայն: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները զեկույցել են, որ ՏԸՀ-ները գումարել են իրենց առաջին նիստերը հունվարի 27-ին՝ օրենքով սահմանված կարգով: ԸԸՀ-ները և ՏԸՀ-ները հիմնականում լավ կահավորված են, թեև ինչպես ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդներն են զեկույցել, որոշ դեպքերում նրանց տարածքները անհարմար են:<sup>17</sup>

Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ համատեղ հունվարի 28-ին բոլոր մարզերում ԿԸՀ-ն կազմակերպել է մասնագիտական դասընթացներ ՏԸՀ-ների անդամների համար:<sup>18</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ

<sup>16</sup> Ընտրական օրենսգրքի 87.5-րդ հոդվածի համաձայն, այն թեկնածուները, որոնք ինքնաբացարկ են հայտնել, պարտավոր են հատուցել իրենց նախընտրական քարոզչության համար պետական միջոցներից կատարած ծախսերը: Սակայն, սույն հոդվածը չի սահմանում փոխհատուցման ընթացակարգը կամ պայմանները:

<sup>17</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդների զեկույցների համաձայն, 14-րդ, 20-րդ և 21-րդ ԸԸՀ-ների փոքր տարածքները կարող են խնդիր առաջացնել ընտրությունների արդյունքների աղյուսակավորման ընթացքում: 40-րդ ԸԸՀ անդամները հայտնել են, որ տեղական իշխանությունները հրաժարվել են վերանորոգել և կահավորել ԸԸՀ-ի տարածքը՝ անհրաժեշտ ԸԸՀ-ի աշխատանքները պատշաճ կերպով կատարելու համար: 15/07, 15/08, 20/11, 20/18 ընտրատեղամասերի տարածքները կարող են լինել անհարմար քվեարկություն համար: 19/35 ընտրատեղամասը գտնվում է ՀՀԿ-ի շտաբի հետ նույն շենքում:

<sup>18</sup> Դասընթացները շարունակվելու են մինչև փետրվարի 15-ը:

երկարաժամկետ դիտորդները դրական են գնահատել այն դասընթացները, որոնց իրենք ներկա են գտնվել:<sup>19</sup>

Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը (ԱՎՎ) հայտարարել է, որ հունվարի 29-ի դրությամբ գրանցված ընտրողների ընդհանուր թիվը՝ 2,507,004 է:<sup>20</sup> Ոստիկանությունը ձեռնարկել է հատուկ միջոցներ՝ նպատակուղղված ընտրացուցակները թարմացնելու և ընտրողներին իրազեկելու՝ Բնակչության պետական ռեգիստրի (ԲՊՌ) մեջ տվյալների ճշգրտման վերաբերյալ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ երկարաժամկետ դիտորդների կողմից այցելած ընտրատեղամասերից շատերում փակցված են ընտրողների իրազեկմանն ուղղված պաստառներ՝ ընտրացուցակներում ճշգրտումներ կատարելու վերաբերյալ: Բացի այդ, ընտրացուցակների և ԲՊՌ-ի որակը բարելավելու նպատակով ԱՎՎ-ն հրապարակում է ամսեկան տեղեկագրեր իր աշխատանքների մասին:

Ոստիկանությունը կազմակերպել է «դռնեղու» ստուգումներ երեք քաղաքներում<sup>21</sup>՝ հայտնաբերելու մեծ թվով գրանցված ընտրողների հասցեները, քանդված շինությունները, որտեղ քաղաքացիները դեռ գրանցված են, ինչպես նաև սխալ հասցեները:<sup>22</sup> Ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ երկարաժամկետ դիտորդների, նման ստուգումներ անցկացվել են մնացած այլ մարզերում համայնքային ոստիկանության կամ տեղական իշխանությունների ներկայացուցիչների կողմից:

Նախագահի չորս թեկնածուները բարձրաձայնել են իրենց մտահոգությունները ընտրացուցակների վերաբերյալ՝ պնդելով, որ գրանցված ընտրողների թիվը չափազանց ուռճացված է:<sup>23</sup> Նրանք մատնանշել են, որ հասկապես մտահոգիչ է արտերկրում բնակվող ընտրողների փոխարեն քվեարկության հնարավորությունը:

Հիմք ընդունելով 2012թ.-ի Խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի վերջնական զեկույցի եզրակացությունները, քաղաքացիական կացության ակտերի գրասենյակներում ներդրվել է էլեկտրոնային ներցանցային համակարգ: Այս համակարգը կապակցված է ԲՊՌ-ի հետ՝ տրամադրելու ճշգրտված ծանուցում և

<sup>19</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ երկարաժամկետ դիտորդները դիտարկել են ՏՀՀ-ների դասընթացները Արագածավանում և Աշտարակում (Արագածոտնի մարզ), Աշոցքում (Շիրակի մարզ), Նոյեմբերյանում (Տավուշի մարզ) և Ծաղկաձորում (Կոտայքի մարզ):

<sup>20</sup> ԱՎՎ-ի համաձայն, գրանցված ընտրողների ընդհանուր թիվը նվազել է տվյալների ճշգրտման ժամանակահատվածում (հունվարի 8-29)։ ընտրացուցակներից հեռացվել են մահացած մարդկանց և այն քաղաքացիների տվյալները, որոնք հանվել են գրանցումից տան տիրոջ կողմից և որոնք դուրս են եկել գրանցումից իրենց իսկ ցանկությամբ՝ երկրից բացակայելու պատճառով, ինչպես նաև զինակոչիկների տվյալները:

<sup>21</sup> Երևան, Գյումրի (Շիրակի մարզ) և Վանաձոր (Լոռու մարզ)

<sup>22</sup> Ոստիկանությունը տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ին, որ այլևս հնարավոր չէ գրանցել քաղաքացիներին բնակության համար չնախատեսված կամ քանդված շինություններում: Ըստ ոստիկանության, սխալ հասցեներում գրանցված անձանց հարցը կլուծվի սեփականության գրանցման նոր համակարգի միջոցով: Սեփականությունը, ներառյալ հասցեն, գրանցելու համար, քաղաքացիները նախապես պետք է ստանան թույլատրություն Ազգային կադաստրի գրասենյակից, որը ստուգում է սեփականությունը մինչ այն գրանցելը (ըստ Կառավարության 1231N հրամանագրում կատարված փոփոխությունների):

<sup>23</sup> Այդ թեկնածուներն են՝ պրնք. Բագրատյանը, Հայրիկյանը, Հովհաննիսյանը և Մելիքյանը:

տվյալների փոխանակման մեխանիզմ՝ ԲՊՌ-ի աշխատանքների և ընտրացուցակների որակի բարելավման նպատակով :

Փետրվարի 4-ի դրությամբ, ԿՀԸ-ն հավատարմագրել է 19 տեղական կազմակերպություններ՝ 3,588 դիտորդներով:

#### IV. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ լրատվամիջոցների մոնիթորինգի նախնական արդյունքները ցույց են տալիս, որ մշտադիտարկվող լրատվամիջոցները ցուցաբերում են նկատելի հետաքրքրություն քաղաքական և ընտրություններին առնչվող լրատվության նկատմամբ:<sup>24</sup> Պաշտոնական քարոզարշավի մեկնարկից ի վեր, քարոզարշավի լուսաբանումը լրատվամիջոցներում աշխուժացել է երեկոյան լուրերում, տարբեր հարցազրույցներում և գովազդային հոլովակներում: Մշտադիտարկված հեռարձակող լրատվամիջոցների մեծ մասը հիմնականում ներկայացրել է թեկնածուների մասին տեղեկատվություն, մինչդեռ առցանց և տպագիր լրատվամիջոցները, ինչպես նաև հեռարձակող *Երկիր մեդիա* և *Ազատություն ռադիոկայանը* ներկայացրել են նաև որոշ քննադատական մեկնաբանություններ և վերլուծություններ:

Պաշտոնական քարոզարշավի առաջին երկու շաբաթների ընթացքում մշտադիտարկված լրատվամիջոցների զգալի մասը պարբերաբար լուսաբանում էր թեկնածուների լայն շրջանակ: Միաժամանակ, լրատվամիջոցները որոշ թեկնածուների լուսաբանել են ավելի հանգամանալիորեն, որոնցից Սերժ Սարգսյանը և Բաֆֆի Հովհաննիսյանը եղել են առավել ներկայացված: Լուսաբանումը գերազանցապես իրադարձային ուղղվածության էր, և հիմնականում քննարկվում էին թեկնածուների կողմից իրականացվող քարոզարշավի տարբեր ոճերը, քան թե ներկայացվում էին նրանց կոնկրետ քաղաքական ծրագրերը կամ քաղաքական դիսկուրսը:

Մշտադիտարկված հեռուստաալիքների մեծ մասը քաղաքական լուրերի լուսաբանման ժամանակ համեմատաբար համեստ մաս են տրամադրել իշխանություններին, այդ թվում նաև գործող նախագահին: Պարոն Սերժ Սարգսյանի գործունեության, այդ թվում՝ տարբեր շնորհանդեսներին կամ հանրային միջոցառումներին նրա մասնակցության մասին լրատվամիջոցների հաղորդումները միշտ չէ, որ հստակորեն տարբերակել են, արդյոք այդ գործունեությունը տարվել է քարոզարշավին զուգահեռ, թե հանդիսացել է որպես նրա մի մաս: Այս հանգամանքը ընդգծել է իր պաշտոնական լիազորությունների և քարոզչական գործունեության տարանջատման հարցը:

<sup>24</sup> Հունվարի 11-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն սկսել է հետևյալ լրատվամիջոցների իր քանակական և որակական մոնիթորինգը՝ 21 (հանրային հեռուստատեսություն), 22, Արմենիա հեռուստատեսություն, Շանթ, Կենտրոն և Երկիր Մեդիա (ողջ երկրի տարածքում հեռարձակվող մասնավոր հեռուստաալիք), Հանրային ռադիո և Ռադիո Ազատություն (ռադիոալիքներ), Հայաստանի Հանրապետություն (պետական ֆինանսավորմամբ օրաթերթ), Առավոտ և Հայկական ժամանակ (օրաթերթեր), [www.news.am](http://www.news.am) և [www.lin.am](http://www.lin.am) (առցանց լրատվամիջոցներ):



Մինչ հանրային ռադիոն առ այսօր իր լրատվական հաղորդումներում ներկայացրել է բավական հավասարակշռված լուսաբանում թեկնածուների վերաբերյալ, հանրային Հ1 հեռուստաալիքը իր լսարանին է ներկայացրել տարբեր թեկնածուների քարոզչության ծավալն արտացոլող լուսաբանում: Քարոզարշավի ժամանակահատվածում լրատվամիջոցը սկսել է «Հարցազրույց» հաղորդաշարը, որը նպատակ ունի հրավիրել բոլոր թեկնածուներին: Միաժամանակ, Հ1 հեռուստաալիքի գլխավոր խմբագիրը իր վարած «Տեսանկյուն» վերլուծական հաղորդման մեջ ցուցաբերել է կողմնակալություն ընդդիմադիր ԲՀԿ-ի, ՀԱԿ-ի և ՀՅԴ-ի, ինչպես նաև որոշ թեկնածուների նկատմամբ:

Երկու հանրային հեռարձակողներն էլ (Հ1-ը և Հանրային ռադիոն) առ այսօր կատարել են բոլոր թեկնածուներին անվճար եթերաժամ տրամադրելու՝ օրենքով սահմանված իրենց պարտականությունները: Քարոզարշավի մեկնարկից ի վեր, բոլոր թեկնածուների քարոզչական հոլովակները անվճար հիմունքներով ցուցադրվում են ժամը 18:00-ին, որը համարվում է «փրայմ թայմի» սկիզբ:<sup>25</sup>

Ընտրական օրենսգրքի դրույթների համաձայն, հունվարի 31-ին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ) հանրությանը ներկայացրեց իր կողմից իրականացված լրատվամիջոցների մոնիթորինգի առաջին փուլի արդյունքները:<sup>26</sup> Հանձնաժողովի կողմից իրականացված լրատվամիջոցների մոնիթորինգը ընդգրկում է բոլոր հեռուստա- և ռադիոալիքները և կենտրոնանում է ընտրություններին առնչվող նրանց ծրագրերի քանակական վերլուծության վրա: Ըստ կարգավորող մարմնի, առ այսօր լրատվամիջոցներին առնչվող բողոքներ չեն եղել:

## V. ԲՈՂՈՔՆԵՐ և ԴԻՄՈՒՄՆԵՐ

Փետրվարի 3-ի դրությամբ, ԿՀՀ-ն ստացել է չորս պաշտոնական բողոք: Ընտրական գրավի վերաբերյալ երկու բողոք է ներկայացրել նախագահի առաջադրված թեկնածու Ռոբերտ Միմոնյանը ընտրական գրավի մասով, որոնք մերժվել են այն հիմնավորմամբ, որ ընտրական գրավի չափը սահմանված է Ընտրական օրենսգրքով և հետևաբար ԿՀՀ-ի իրավասությունից դուրս է:<sup>27</sup> Մյուս երկու բողոքները մերժվել են ըստ էության:<sup>28</sup> Մեկ այլ դեպքում, թեկնածու Արման Մելիքյանը դիմել է ԿՀՀ երկքաղաքացիություն ունեցող քաղաքացիների թվի և ՀՀ քաղաքացիությունը կորցրած անձանց մասին տվյալներ

<sup>25</sup> Պարոն Սեդրակյանը նախկինում հայտնել է, որ չի օգտագործելու իրեն հատկացված անվճար եթերաժամը հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով իր քարոզարշավի առաջին տասն օրվա ընթացքում: Նա սկսել է օգտագործել եթերաժամը փետրվարի 1-ից:

<sup>26</sup> ՀՌԱՀ-ի եզրակացությունները առկա են՝ <http://www.tvradio.am/uploads/21-27.pdf>

<sup>27</sup> Նախագահի առաջադրված թեկնածու Ռոբերտ Միմոնյանը ներկայացրել է բողոքներ ընտրական գրավի սահմանադրականության վերաբերյալ ԿՀՀ, Վարչական դատարան, Սահմանադրական դատարան և Գլխավոր դատախազություն. Բոլոր բողոքները չեն ընդունվել վարույթ կամ մերժվել են գործն ըստ էության քննելու արդյունքում:

<sup>28</sup> Պարոն Ղուկասյանը պահանջել է անվավեր ճանաչել պարոն Սարգսյանի թեկնածության գրանցումը՝ ընտրությունների օրինականությունը ապահովելու նպատակով: Նախագահի առաջադրված թեկնածու Ռուբեն Այվազյանը պահանջել է արգելել ԿՀՀ անդամներին կատարել ենթադրյալ բացասական քարոզչություն այն բանից հետո, երբ ԿՀՀ Նախագահը հայտարարել է, որ նա չգիտի, թե ով է Ռուբեն Այվազյանը:

տրամադրելու խնդրանքով: Դիմումը փոխանցվել է ԱՎՎ, որն էլ տրամադրել է դիմողին պահանջվող տվյալները:

Վարչական դատարանը ստացել է հինգ բողոք նախագահի առաջադրված թեկնածուներ Գարեգին Ղազարյանից, Մարտիկ Սարգսյանից, Ռոբերտ Սիմոնյանից, Նարինե Մկրտչյանից և Ռուբեն Այվազյանից: Երկու բողոքներում վիճարկվել են ընտրական գրավի առնչությամբ ԿԸՀ-ի որոշումները թեկնածուների գրանցման վերաբերյալ: Երկու այլ դեպքերում, հայցվորները պնդել են, որ ԱՎՎ-ի՝ հանրապետությունում վերջին տաս տարվա ընթացքում մշտապես բնակչության տեղեկանքի տրամադրման մերժումը պատշաճ չի եղել: Բոլոր բողոքները մերժվել են ընդդատության բացակայության հիման վրա կամ գործն ըստ էության քննելու արդյունքում: Որոշումները հրապարակված են պաշտոնական կայքում: Ըստ օրենքի, Վարչական դատարանի որոշումները վերջնական են: Մի դեպքում, հայցվորը իրավունք է ունեցել Վարչական դատարանի միջանկյալ որոշումը հայցը վարույթ չընդունելու մասով բողոքարկել Վարչական վերաքննիչ դատարան: Այս դատարանի կողմից ընտրություններին առնչվող գործերը քննելու հատուկ ժամկետներ չկան:<sup>29</sup>

Սահմանադրական դատարանը ստացել է նախագահի առաջադրված թեկնածուներից երկու բողոք ընտրական գրավի վերաբերյալ: Երկու գործն էլ չեն ընդունվել վարույթ:<sup>30</sup>

Գլխավոր դատախազությունը տարածել է թռուցիկներ՝ հորդորելով քաղաքացիներին զեկույցել ընտրակաշառքի դեպքերի մասին՝ առանց քրեական հետապնդման մտավախության, իսկ ոստիկանությունը բաժանել է ոստիկանների համար նախատեսված ուղեցույց ընտրությունների հետ առնչվող նրանց լիազորությունների վերաբերյալ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն տեղեկացվել է երեք բողոքների մասին, որոնք ներկայացվել են Գլխավոր դատախազություն:<sup>31</sup> Ի լրումն, ոստիկանությունը հետաքննում է գործող նախագահի նախընտրական շտաբի հետ կապված ընտրակաշառքի հնարավոր մեկ գործ: Այդ գործին առնչվող տեղեկությունները տեղադրվել են Գլխավոր դատախազության կայքում:

<sup>29</sup> Միջանկյալ որոշումների կայացման ընդհանուր ժամկետները սահմանված են ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 117-րդ հոդվածով և կարող են տևել մինչև մեկ օրացուցային ամիս (որպեսզի որոշվի արդյոք պետք է այդ բողոքը քննարկվի) և մինչև 15 օր (գործին վերաբերող որոշում կայացնելու համար):

<sup>30</sup> Ռոբերտ Սիմոնյանը բողոք է ներկայացրել դատարան՝ ճանաչել ընտրական գրավի պայմանը որպես անհաղթահարելի խոչընդոտ քարոզչությունը իրականացնելու համար: Մեկ այլ դեպքում, Պավլիկ Սարգսյանը բողոքարկել է Ընտրական օրենսգրքի 80-րդ հոդվածի սահմանադրականությունը, որտեղ սահմանվում է ընտրական գրավի նախապայմանը: Սահմանադրական դատարանը երկու բողոքն էլ չի ընդունել վարույթ, քանի որ դիմումատուները միայն առաջադրված և չգրանցված թեկնածուներ են: Որոշումները տեղադրված են դատարանի կայքում:

<sup>31</sup> Մեկ բողոք, որը ներկայացրել էր պարոն Սիմոնյանը, մերժվել էր գործն ըստ էության քննելու արդյունքում, իսկ պարոն Հովհաննիսյանի կողմից ներկայացված երկու բողոքները, որոնցում նա պնդում է, որ իր քարոզարշավի համար առկա են խոչընդոտներ (մի դեպքում տեղական կառավարման մարմինների կողմից) գտնվում են հետաքննության փուլում:

## VI. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Զեկույցը նախապատրաստելու ժամանակահատվածում, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն շարունակել է իր կանոնավոր գործունեությունը, հանդիպել է պաշտոնական անձանց, բոլոր գրանցված թեկնածուների, կուսակցությունների ներկայացուցիչների, ընտրությունների կազմակերպիչների, դատական պաշտոնյաների, լրատվական և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ինչպես նաև դիվանագիտական առաքելությունների հետ: Ամբողջ երկրի տարածքում տեղաբաշխված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ երկարաժամկետ դիտորդները շարունակում են հետևել մարզերում ընտրությունների նախապատրաստմանը և քարոզարշավին, ինչպես նաև նախապատրաստվում են տեղաբաշխել կարճաժամկետ դիտորդներին: Դիվանագիտական ներկայացուցիչների և Հայաստանում Հանրապետությունում գրանցված միջազգային կազմակերպությունների համար հունվարի 24-ին կազմակերպվել է ճեպագրույց: ԸՂԱ-ն նաև հանդիպել է ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի Միջազգային քարտուղարության անձնակազմի հետ:

*Սույն զեկույցի անգլերեն տարբերակը հանդիսանում է միակ պաշտոնական  
փաստաթուղթը:*

*Առկա է հայերեն ոչ պաշտոնական թարգմանությունը:*